

“ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ապահովագրական ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

2013 երկրորդ եռամսյակ

Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1996թ.-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գտնվող գրասենյակում՝ Վ. Սարգսյան 10/110 հասցեում:

Ընկերության բաժնետոմսերի 22.5%-ը պատկանում է Հովիկ Շահինյանին (ՀՀ, ք. Ստեփանավան, Պռոշյան փողոց, տուն 20), 22.5%-ը՝ Վահան Գաբրիելյանին (ՀՀ, ք. Երևան, Քանաքեռի 2-րդ փողոց, տուն 19), 30%-ը՝ Լևոն Քոչարյանին (ՀՀ, ք. Երևան, Ձորափի փողոց 72ա), 12,5%-ը՝ Վահագն Շահինյանին (ՀՀ, ք. Երևան, Շահումյարյան փողոց 6, բ. ն.10), 12.5%-ը՝ Վահագն Խաչատրյանին (ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փողոց, շ 51, բ. ն.38):

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ավարտվել է, ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: 30.06.2013թ -ի դրությամբ ընկերությունն ունի 5 անդամից բաղկացած խորհուրդ: Ընկերության կողմից հատակ տարանջատված են ընկերության խորհրդի, գործադիր մարմնի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունում ձևավորված է ներքին աուդիտի ստորաբաժանում:

Ընկերությունն ՀՀ տարածքում ունի 1 մասնաճյուղ:

30.06.2013թ դրությամբ ընկերությունն ունի 450 ապահովագրական գործակալ և 150 աշխատակից :

Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է:

Ներկայացված գումարները կլորացված են հազար դրամով:

Ծանոթագրություն 4 . Հաշվապահական հաշվառման գնահատականներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով փոփոխման ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա կամ փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում

Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության Պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի՝ կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա:

Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ուժի մեջ մտած ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես եկամուտ:

Վերաապահովագրական ակտիվներ

Ընկերությունը ստանձնած ռիսկերի գծով վնասները ծածկելու նպատակով վերաապահովագրում է իր կողմից ապահովագրած ռիսկերը:

Վերաապահովագրական պայմանագրերից ծագող ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապատասխան ապահովագրության պայմանագրերից ծագած ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի դիմաց:

Վերաապահովագրական պայմանագրերով սահմանված գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքներին համապատասխան: Վերաապահովագրավճարի գծով ծախսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ փոխանցվում է վերաապահովագրված ռիսկը: Փոխանցված վերաապահովագրավճարների չծախսագրված մասը ներառվում է վերաապահովագրական ակտիվներում:

Վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ պայմանագրի պայմաններով իրեն հասանելի բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք:

Եթե վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է, ապա Ընկերությունը նվազեցնում է դրա հաշվեկշռային արժեքը և արժեզրկումից կորուստը ճանաչում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերվող ոչ նյութական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված անորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

Հիմնական միջոցներ

Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

<i>Շենք-շինություններ</i>	<i>20 տարի</i>
<i>տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային սարքավորումներ</i>	<i>1 տարի</i>
<i>տրանսպորտային միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>այլ հիմնական միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

Արտարժույթ

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը)՝ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկեր ճանաչվում են կապված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազայի միջև եղած տարբերություններից:

Շահութահարկը ճանաչվում է շահույթ/վնասում:

Հակերը, որոնք վերաբերում են այն հողվածներին, որոնք ճանաչված են՝

ա/ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում

բ/ ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են սեփական կապիտալում:

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ

Ընկերության սեփականատերերին բաշխումներ ճանաչված շահաբաժինների գումարը արտացոլվում է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում :

Ֆինանսական գործիքներ

Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով դեբիտորական պարտքերը, այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները ,ներդրումները, պահովագրության գծով և այլ կրեդիտորական պարտքերը , այլ պարտավորությունները:

Ֆինանսական ակտիվների ճանաչում, չափում

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այլ անձանց:

Ֆինանսական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գնանշումների հիման վրա:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացվող արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացվող արժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով զեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթ/ վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները: Ընկերությունը օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցներ չունի:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներն են, որոնք առաջանում են կրեդիտորներից ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու հետևանքով:

Պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Կրեդիտորական պարտքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական /հաշվում նշված/ արժեքով :

Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնի ֆինանսական պարտավորությունը այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Պահուստներ

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է

Պահուստը պետք է ճանաչվի, երբ՝ կազմակերպությունն ունի ներկա պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանավատորեն գնահատել:

Ապահովագրական պահուստները ձևավորվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական ակտերի, ինչպես նաև ՖՀՄՄ 4-ի պահանջների համաձայն:

Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցներին հատուցումները ներառում են մասնավորապես աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության մասհանումը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները, տարեկան արձակուրդները, ինչպես նաև ազատման նպաստները:

Աշխատակիցների հատուցումները ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, երբ աշխատակիցները մատուցում են իրենց ծառայությունը Ընկերությանը

Ընկերությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների բացակայությունները տարբեր պատճառներով, ինչպիսիք են արձակուրդը, անաշխատունակությունը, հիվանդությունը, ծննդաբերությունը:

Կազմակերպությունը պետք է չափի կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը կազմակերպությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե փոփոխություն է կատարվել հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ. կամ հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Ծանոթագրություն 6. Ձուտ ապահովագրավճարներ 30.

ՀՀ դրամ

Ապահովագրության դասեր, որոնց գծով հավաքագրվել է ապահովագրավճար	Համախառն ապահովագրավճարներ		Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	
	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ
Դ-Ժբախտ պատահարներից ապահովագրություն	13,033	10,059		
Առողջության ապահովագրություն	2,390,444	1,219,541		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	182,487	163,600	33,287	11,395
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	59,714	40,720	24,493	21,526
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	85,047	110,033	38,923	32,816
Ավտո պատասխանատվություն	940	1,210		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	8,365	45,321	3,099	2,160
Ֆինանսական վնասների ապահովագրություն	10,681	11,269	11,086	10,521

Աջակցության ապահովագրություն	10,595	7,833		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր պահովագրություն	1,299,706	1,124,079		
Ընդամենը	4061012	2,733,667	110888	78418

Ծանոթագրություն 9. Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամտի աղբյուրը	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ ժամանակաշրջան	համադրելի ժամանակաշրջան
Ավանդներ ռեզիդենտ բանկերում	107446		71579
ՀՀ պետական պարտատոմսեր			
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	1131		
Տրամադրված փոխառություններ	12505		20513
Այլ ներդրումներ	867		322
Ընդամենը	121949		92414

Ծանոթագրություն 10. Ջուտ հատուցումներ

Ապահովագրության դասեր, որոնց գծով վճարվել են հատուցումներ	Համախառն հատուցումներ		Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ
Գ-ժբախտ պատահարներից ապահովագրություն				
Առողջության ապահովագրություն	359,208	34258		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	110,663	92,535	10302	7092
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն		4,419		4128
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	1,285	1,708	225	
Ավտո պատասխանատվություն		1,611		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն		244,659		
Աջակցության ապահովագրություն	599	198		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	580,609	454,463		
Ընդամենը	1,052,363	833851	10527	11220

Ծանոթագրություն 11. Չեռքերման ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ
Առաջնային միջնորդավճար	450,719	166045
Երկրորդային միջնորդավճար	769	1558
Ընդամենը	451488	167603

Ծանոթագրություն 12. Այլ գործառնական և վարչական ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ
Դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարներ	54,495	31,971
Վնասների կարգավորման և այլ ծախսեր	14450	9897
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ , արձակուրդային պահուստ	272759	187757
Սոցիալական ապահովագրության գծով ծախսեր		27690
Գործուղման ծախսեր	2138	478
<i>Ուսուցման ծախսեր</i>	722	432
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	43,648	12150
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	1,213	1085
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	6,800	16584
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	7867	5880
Մարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	3802	3532
Շենքի վերանորոգում, սպասարկում	139	258
<i>Կապ և հեռահաղորդակցություն</i>	10873	10812
Գրասենյակային, տնտեսական, չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլն	50951	38732
Տոկոսային ծախսեր		1365
Ընդամենը	469857	348623

Ծանոթագրություն 13. Այլ ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ
Գովազդի գծով ծախսեր	35,252	46,482
Ներկայացուցչական ծախսեր	2,143	1,494
Անդամավճարներ, բարեգործություն	35071	25683
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվներ մաշվածություն	42366	43359
Տուգանքներ և այլ ծախսեր	4212	5837
Հիմնական միջոցների , ոչ նյութական	616	56

ակտիվների իրացումից զուտ ծախս		
Ֆինանսական ակտիվների օտարումից զուտ ծախս	108	2012
Ընդամենը	119768	124923

Ծանոթագրություն 14. Ծախսեր կապված շահութահարկի հետ.

Շահութահարկի գծով ծախսի /եկամտի/ խոշոր բաղադրիչներ	Ծախսի մեծությունը	
	30.06.2013թ դրությամբ	30.06.2012թ դրությամբ
Ընթացիկ հարկի գծով ծախս	61000	0
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	4165	0
Հետաձգված հարկի գծով ծախս		0
Ընամենը	56835	0

Ծանոթագրություն 15. ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վատահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալներդ.	Ընդամենը
--	-----------------------	--------------------------	-------------------------	---------------------------	---------------------------------------	----------

Սկզբնական արժեք

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	23460			13782		37242
Ավելացում	1200			1787		2987
Օտարում	370					370
Արժեզրկում	-684					-684
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	23146			13782		36928
Ավելացում	41					41
Օտարում						
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճգրտում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	23187			13782		36969

Կուտակված մաշվածություն

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	8379			11709		20088
Ավելացում	620			149		769
Օտարում	-69					-69
Արժեզրկում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	8930			11858		20788
Ավելացում	693			149		842

Օտարում						
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ժգրտում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	9623			12007		21630

Ձուտ հաշվեկշռային արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	13564	0	0	1775	0	15339
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	14216			1924		16140

Ծանոթագրություն 16. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն.միջոց. գծով կապիտալներդր.	Վարձ.հիմն. միջոց.գծով կապիտալներդր.	Ընդամենը
--	--------	-------------------------------	-----------------	-----------------------	--------------------------------	-------------------------------------	----------

Սկզբնական արժեք

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	341089	84591	56177	126645			608502
Ավելացում		3256		1867			5123
Օտարում							
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	341089	87487	56177	128512			613625
Ավելացում	65700	4333	252	1978			72263
Օտարում	-84527						-84527
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	322262	92180	56429	130490			601361

Կուտակված մաշվածություն

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	52222	53377	18235	46169			170003
Ավելացում	4264	7636	2760	6331			20991
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	56486	61013	20995	52500			190994
Ավելացում	3560	6751	2815	6640			19766
Օտարում	-29810						-29810
Վերագնահատում							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ամանակաշրջանի վերջին	30236	67764	23810	59140			180950

Ձուտ հաշվեկշռային արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	292026	24416	32619	71350	0	0	420411
--------------------------------	---------------	--------------	--------------	--------------	----------	----------	---------------

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	284603	26836	35182	76012	0	0	422631
---------------------------------------	--------	-------	-------	-------	---	---	--------

16.1 Վաճառքի համար մատչելի Հիմնական միջոցներ

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	298400						298400
Ավելացում							
Նվազեցում	65700						65700
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	232700						232700

Ծանոթագրություն 17. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվի կատեգորիա	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Իրական արժեքով` շահույթ/վնասով չափվող ֆինանսական ակտիվներ	2046545	1675058
Ստացվելիք տոկոսներ	92781	88534
Հնարավոր կորուստների պահուստ	-48781	-43659
Ընդամենը	2090545	1719933
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	20571	
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	452332	268656
Հրավոր կորուստների պահուստ	-22722	-15052
Ընդամենը	429610	253604

Ծանոթագրություն 18. Վերաապահովագրական ակտիվներ

	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
ՉԱՊ	95,633	80,596
ՆՉՊՊ	49,155	3239
Վերաապահովագրողից ստացվելիք միջնորդավճար	26,571	15274
Վերաապահովագրողից ստացվելիք հատուցումներ	195,912	185486
Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ	1,073	256
Հնարավոր կորուստների պահուստ	-3683	-2848
Ընդամենը	364661	282003

Ծանոթագրություն 19. Այլ ակտիվներ

	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Խիստ հաշվառման բլանկներ,	3574	3822
վառելիք,	780	1041
պաշարներ	1000	1000
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	6859	81427
Ընդամենը	12213	87290

Ծանոթագրություն 20. Դրամական միջոցներ

	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Կանխիկ դրամ դրամարկղում	4593	6,787
Կանխիկ դրամ ճանապարհին		20549
Բանկային հաշիվներ բանկերում	72295	498846
Հնարավոր կորուստների պահուստ	-723	-4988
Ընդամենը	76165	521194

Ծանոթագրություն 21. Հարկում

Ընկերությունը հաշվեկշռում ճանաչել է 8330 հազար դրամ հետաձգված հարկային ակտիվ, որն առաջացել է աշխատակիցների հատուցումների գծով ձևավորված պարտավորությունների հաշվեկշռային և հարկային բազայի տարբերությունից:

Ծանոթագրություն 22. Ապահովագրության գծով Ստացվելիք գումարներ

	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Ապահովադիրներից	1893124	258324
Ապահովագրական գործակալներից	152733	303019
Հնարավոր կորուստների պահուստ	-53731	-43869
Ընդամենը	1992126	517474

Ծանոթագրություն 23. Հետաձգված ծախսեր

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	334042
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	579166
Ամորտիզացիա	248513
Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	664694

Ծանոթագրություն 24. Հաշվեգրած եկամուտ

	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Հաշվեգրած եկամտի տեսակ		
Միջնորդավճարներ	21689	20921
Սուբրոզացիա	99526	292195
Այլ գործառնական եկամուտ	2395	5564
Դադարեցման հետևանքով ստացվելիք վերաապահովագրավճարներ	1145	627
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների իրացումից զուտ եկամուտ	787	
Եկամուտներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից	796	433

Ծանոթագրություն 25. Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորություններ

Պարտավորության աղբյուր	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Հատուցումների գծով	42838	64654
Միջնորդներին վճարվելիք գումարներ	127814	92887
Ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ	2965	3686
Ընդամենը	173617	161227

Ծանոթագրություն 26. Կրեդիտորական պարտավորություններ վերաապահովագրության գծով

Պարտավորություն ըստ դասերի	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Ցամաքային տրանսպորտ	45400	21526
Բեռ	32497	16874
Ավտոմեք պատասխանատվություն	301	295
Գույք	60547	43773
Ֆինանսական ռիսկ	11098	
	9335	6705
Պայմանագրային պարտավորություն		
Միջնորդներին վճարվելիք գումարներ		
Ընդամենը	159178	89173

Ծանոթագրություն 27. Այլ պարտավորություններ

Պարտավորության աղբյուր	30.06.2013թ դրությամբ	31.12.2012թ դրությամբ
Աշխատավարձ, հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	41715	21187
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	73750	15669
Հետաձգված հարկային պարտավորություններ	405	565
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների և ապրանքների դիմաց	31186	32528
Վճարվելիք շահաբաժիններ		1228
Ստացված կանխավճարներ և այլ պարտավորություններ	33632	399956
Տրամադրված երաշխավորությունների և երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ	23185	11896
Ընդամենը	203873	481801

Ծանոթագրություն 28. Ապահովագրական պահուստներ

Ապահովագրության դաս	30.06.2013թ	31.12.2012թ
---------------------	-------------	-------------

	դրությամբ	դրությամբ
ՉԱՊ	3093736	1402786
Պահանջների պահուստ	644801	504805
Հավասարակշռման պահուստ	120092	120092

Ծանոթագրություն 29. Կապիտալ

30.06.13թ –ի դրությամբ Ընկերության հայատարաված և վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1 290 000 հազար:

Ծանոթագրություն 93. Արտահաշվեկշռային հաշիվներ

Ցուցանիշի անվանումը	Նախորդ տարվա վերջի մնացորդը	հազար դրամ
		Հաշվետու ժամանակաշրջանի վերջի մնացորդը
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>
Գործառնական վարձակալությամբ օգտագործվող շենքեր	632	3692
Գործառնական վարձակալությամբ օգտագործվող փոխադրամիջոցներ և այլ հիմնական միջոցներ		1310
Գրավադրված Դրամական միջոցներ		
Որպես գրավ պահվող անշարժ գույք	103900	132400
Ստացված երաշխավորություններ	152498	297,869
Պայմանական պարտավորություններ	497849	562989
Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր	207467	206114
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ	589,772,330	922,633,073
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով վերաապահովագրական գումարներ	52,420,967	73,210,676

«Նաիրի-Ինչուրան» Ապահովագրական ՍՊԸ

Գործադիր տնօրեն`

Գլխավոր հաշվապահ`

Դավիթ Բաղդասարյան

Նադեժդա Գասպարյան